ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/05

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/54-2021 գրությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.12.2020թ. թիվ 01/61-25692 գրության հիման վրա 11.01.2021թ. թիվ 26/26-1/54-2021 գրությամբ նախաձեռնել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/05 ընթացակարգի շրջանակներում 19.01.2021թ. ժամը 10:25-ին և 27.01.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.12.2020թ. թիվ 01/61-25692 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թվով 8 չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատելիս արձանագրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 1.1) 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և օրենքով սահմանված կարգով Ընկերությանն առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն վերջինիս կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Միաժամանակ Ընկերությունը 16.12.2020 թվականին գնահատող հանձնաժողովին հասցեագրված էլեկտրոնային գրությամբ տեղեկացրել է, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկներում տեղի է ունեցել վրիպակ, այն է՝ գնային առաջարկները ներկայացվել են գնման առարկաների միավորների արժեքներով և խնդրել շտկման հնարավորության բացառման դեպքում՝ հայտը հանել մասնակիցների ընդհանուր հայտերի ցուցակից:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է հրավերով ստանձնած պարտավորությունը, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մերժել է Ընկերության հայտը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջները՝

առաջարկում է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/05 ընթացակարգի շրջանակներում 19.01.2021թ. ժամը 10:25-ին և 27.01.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է հետևյալը.

««Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով (հավելված 1.1) ապրանքների տեխնիկական բնութագրերը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժիններին վերաբերող տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են.

-1-ին չափաբաժնի մասով «Ջրի մատակարարումը պետք է կատարվի 18-20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով): Գործարանային մակնշմամբ, խցանը հերմետիկ փակված: Տաք և սառը ջրի սարքի լվացում ջրի առաջին տեղադրման ժամանակ, իսկ տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության: Որակը և անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 30.10.2014թ. N 1240-Ն որոշմամբ հաստատված շշալցված բարձր կարգի խմելու ջրի որակի և անվտանգության չափորոշիչների, իսկ մշակումը՝ «Սննդամթերքի

անվտանգության մասին» օրենքի 8-րդ հոդվածի: Անհրաժեշտ է նաև ներկայացնել ապրանքի որակի սերտիֆիկատ: Մատակարարումը պետք է կատարվի ք.Երևան, Արգիշտիի 1 և Փ.Բուզանդի 1/3 հասցեներով, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12.00՝ համաձայն գնորդի պահանջագրով նշված սենյակներ, վաճառողի բանվորական ուժով և միջոցներով: Տարաները պետք է լինեն փաթեթավորված մեկ անգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներով» բառերը,

-2-րդ չափաբաժնի մասով «ջրի մատակարարումը պետք է կատարվի 18.9լ-20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով): Ջրի բաղադրությունը. SO24<15, Ca2+<10, Mg2+<10, NO3<1.0, Cl<15, pH6.5-8.5, Կոշտություն < 2 Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Տերյան 44 հասցեով, յուրաքանչյուր ամսվա սկզբի օրը, մինչև ժամը 12.00: Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Մատակարարը պետք է տրամադրի նաև ջրից տաք և սառը վիճակում օգտվելու սարքեր 20 հատ» բառերը,

-3-րդ չափաբաժի մասով «Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Ջրի բաղադրությունը (< mg/l). SO24 < 15, Ca2+ < 30, Mg2+ < 10, NO3 < 1.0, Cl < 15, Կոշտություն < 2, pH- 6.5-8.5: Անվատնգությունը՝ ըստ 2-lll-4.9 01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Ջրի մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի մինչև յուրաքանչյուր ամսվա 2-ը, 19 լիտր տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված տարաներով (որոնք ենթակա են վերադրածման): Մինչև կնքվելիք պայմանագրի ավարտը Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմին անհատույց շահագործման պետք է հանձնվեն նաև թվով 5 ջրի սարք (քուլլեր):Մատակարարման հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 26» բառերը,

-4-րդ չափաբաժնի մասով «Պարտադիր պայման է հանդիսանում մատակարարի հաշվին տրամադրել թվով 20 հատ ջրօգտագործման սարք, լրացուցիչ մաքրման փուլ անցածն այն է՝ ենթարկված լինի կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրման ախտահանված լինի ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Ջրերի մատակարարումը պետք է կատարվի 18 -20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով): Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010

հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Սասունցի Դավիթ 87 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12.00» բառերը,

-5-րդ չափաբաժնի մասով «Ջուրը մանրակրկիտ մաքրման արդյունքում շշալցված լինի 19 լիտրանոց պոլիկարբոնատային տարրաների մեջ, որոնք, շնորհիվ ապակու պարունակության, թույլ են տալիս ջուրը պահպանել երկար ժամանակ: Սակայն բազմաստիճան մաքրման արդյունքում ջուրը չպետք է կորցնի իր բնական բաղադրությունը»

-8-րդ չափաբաժնի մասով «Ջրի մատակարարումը պետք է կատարվի 20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով) Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Ա. Արմենակյան 272 հասցեներով, յուրաքանչյուր ամսվա սկզբի մինչև ժամը 12.00» բառերը,

-9-րդ չափաբաժնի մասով «Աղբյուրի ջուր, որը շշալցումից առաջ պետք է ենթարկված լինի բազմաստիճան (5 փուլով) մաքրման և շշալցված 19լ. տարողությամբ պոլիէթիլային տարաների մեջ, որոնք ենթակա են հետվերադարձման: Ապրանքը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջարկի 1 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը»:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել էլեկտրոնային եղանակով ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.12.2020թ. էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ կցելով թիվ 3 արձանագրությունը:

5. Ընկերությունը 16.12.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևալը. «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկգարով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում տեղի է ունեցել վրիպակ, մասնավորապես՝ հավելված 2-ի գնային առաջարկի գինը սյունակում նշվել է մեկ միավորի գինը (միավորի արժեք+ԱԱՀ) պայմանագրի ընդհանուր գնի փոխարեն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հնարավորություն տալ շտկելու ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գնի մեջ տեղի ունեցած վրիպակը:

Վերը նշված հավելված 2-ում ընդհանուր գնի մասով շտկման հնարավորության բացառման դեպքում՝ խնդրում եմ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը հանել մասնակիցների ընդհանուր հայտերի ցուցակից»:

6.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկման ենթակա փաստաթղթերը: Միաժամանակ արձանագրությամբ արձանագրվել է, որ ի պատասխան 16.12.2020թ. գնահատող հանձնաժողովին ուղղված Ընկերության գրության՝ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջով, չի կարող շտկման ներկայացնել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը՝ հաշվի առնելով, որ գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/54-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 24.12.2020թ. թիվ 01/61-25692 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին

ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է հետևյալը.

««Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով (հավելված 1.1) ապրանքների տեխնիկական բնութագրերը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժիններին վերաբերող տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են.

-1-ին չափաբաժնի մասով «Ջրի մատակարարումը պետք է կատարվի 18-20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով): Գործարանային մակնշմամբ, խցանը հերմետիկ փակված: Տաք և սառը ջրի սարքի լվացում ջրի առաջին տեղադրման ժամանակ, իսկ տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության: Որակը և անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 30.10.2014թ. N 1240-Ն որոշմամբ հաստատված շշալցված բարձր կարգի խմելու ջրի որակի և անվտանգության չափորոշիչների, իսկ մշակումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 8-րդ հոդվածի: Անհրաժեշտ է նաև ներկայացնել ապրանքի որակի սերտիֆիկատ: Մատակարարումը պետք է կատարվի ք.Երևան,

Արգիշտիի 1 և Փ.Բուզանդի 1/3 հասցեներով, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12.00՝ համաձայն գնորդի պահանջագրով նշված սենյակներ, վաճառողի բանվորական ուժով և միջոցներով: Տարաները պետք է լինեն փաթեթավորված մեկ անգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներով» բառերը,

-2-րդ չափաբաժնի մասով «ջրի մատակարարումը պետք է կատարվի 18.9լ-20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով): Ջրի բաղադրությունը. SO24<15, Ca2+<10, Mg2+<10, NO3<1.0, Cl<15, pH6.5-8.5, Կոշտություն < 2 Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Տերյան 44 հասցեով, յուրաքանչյուր ամսվա սկզբի օրը, մինչև ժամը 12.00: Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Մատակարարը պետք է տրամադրի նաև ջրից տաք և սառը վիճակում օգտվելու սարքեր 20 հատ» բառերը,

-3-րդ չափաբաժի մասով «Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Ջրի բաղադրությունը (< mg/l). SO24 < 15, Ca2+ < 30, Mg2+ < 10, NO3 < 1.0, Cl < 15, Կոշտություն < 2, pH- 6.5-8.5: Անվատնգությունը՝ ըստ 2-lll-4.9 01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Ջրի մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի մինչև յուրաքանչյուր ամսվա 2-ը, 19 լիտր տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված տարաներով (որոնք ենթակա են վերադրածման): Մինչև կնքվելիք պայմանագրի ավարտը Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմին անհատույց շահագործման պետք է հանձնվեն նաև թվով 5 ջրի սարք (քուլլեր):Մատակարարման հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 26» բառերը,

-4-րդ չափաբաժնի մասով «Պարտադիր պայման է հանդիսանում մատակարարի հաշվին տրամադրել թվով 20 հատ ջրօգտագործման սարք, լրացուցիչ մաքրման փուլ անցածն այն է՝ ենթարկված լինի կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրման ախտահանված լինի ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Ջրերի մատակարարումը պետք է կատարվի 18 -20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով): Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի

պահանջագրի՝ Սասունցի Դավիթ 87 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12.00» բառերը,

-5-րդ չափաբաժնի մասով «Ջուրը մանրակրկիտ մաքրման արդյունքում շշալցված լինի 19 լիտրանոց պոլիկարբոնատային տարրաների մեջ, որոնք, շնորհիվ ապակու պարունակության, թույլ են տալիս ջուրը պահպանել երկար ժամանակ: Սակայն բազմաստիճան մաքրման արդյունքում ջուրը չպետք է կորցնի իր բնական բաղադրությունը»

-8-րդ չափաբաժնի մասով «Ջրի մատակարարումը պետք է կատարվի 20լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված շշերով (տարաներով) Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Ա. Արմենակյան 272 հասցեներով, յուրաքանչյուր ամսվա սկզբի մինչև ժամը 12.00» բառերը,

-9-րդ չափաբաժնի մասով «Աղբյուրի ջուր, որը շշալցումից առաջ պետք է ենթարկված լինի բազմաստիճան (5 փուլով) մաքրման և շշալցված 19լ. տարողությամբ պոլիէթիլային տարաների մեջ, որոնք ենթակա են հետվերադարձման: Ապրանքը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջարկի 1 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը»:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել էլեկտրոնային եղանակով ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 15.12.2020թ. Համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ կցելով թիվ 3 արձանագրությունը:

Ընկերությունը 16.12.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևալը. «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում տեղի է ունեցել վրիպակ, մասնավորապես՝ հավելված 2-ի գնային առաջարկի գինը

սյունակում նշվել է մեկ միավորի գինը (միավորի արժեք+ԱԱՀ) պայմանագրի ընդհանուր գնի փոխարեն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հնարավորություն տալ շտկելու ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գնի մեջ տեղի ունեցած վրիպակը:

Վերը նշված հավելված 2-ում ընդհանուր գնի մասով շտկման հնարավորության բացառման դեպքում՝ խնդրում եմ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը հանել մասնակիցների ընդհանուր հայտերի ցուցակից»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկման ենթակա փաստաթուղթը: Միաժամանակ արձանագրությամբ արձանագրվել է, որ ի պատասխան 16.12.2020թ. գնահատող հանձնաժողովին ուղղված Ընկերության գրության՝ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջով, չի կարող շտկման ներկայացնել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը՝ հաշվի առնելով, որ գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե</u> հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում <u>մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն, ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում դրանք չի շտկել՝ խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը 16.12.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևալը. «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկգարով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում տեղի է ունեցել վրիպակ, մասնավորապես՝

հավելված 2-ի գնային առաջարկի գինը սյունակում նշվել է մեկ միավորի գինը (միավորի արժեք+ԱԱՀ) պայմանագրի ընդհանուր գնի փոխարեն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հնարավորություն տալ շտկելու ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գնի մեջ տեղի ունեցած վրիպակը:

Վերը նշված հավելված 2-ում ընդհանուր գնի մասով ***շտկման հնարավորության բացառման դեպքում՝ խնդրում եմ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը հանել մասնակիցների ընդհանուր հայտերի ցուցակից***»:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպիսով՝ Կարգի վերը նշված կետի համաձայն՝ գնային առաջարկը՝ Ընկերության կողմից նշված հիմքով, այն է՝ սխալմամբ նշվել է մեկ միավորի գին, ենթակա չէ շտկման, հետևաբար գտնում եմ, որ Պատվիրատուն 17.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը և շտկման չտալով վերջինիս գնային առաջարկը, գործել է իրավաչափ: Մինչդեռ, անդրադառնալով Ընկերության կողմից գրությամբ բարձրացված հետևյալ խնդրանքին. «Հավելված 2-ում ընդհանուր գնի մասով շտկման հնարավորության բացառման դեպքում՝ խնդրում եմ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը հանել մասնակիցների ընդհանուր հայտերի ցուցակից», ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտերը բացելուց հետո խնդրելով «Սփլեշ

Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը հանել մասնակիցների ընդհանուր հայտերի ցուցակից, ըստ էության, հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից և Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց՝ թույլ տալով նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված խախտում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/54-2021 գրությամբ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**